[illegible]
[illegible]
БИБЛИО[illegible]
[illegible] [illegible]оратуры
ССРА
3688
10205

# ՃԱՌ ՆԵՐԲՈՂԱԿԱՆ

Ի հանդէս երջանիկ կուսանացն մէջ նախախնամութեանց հրաշագործ յօրինուածովք։

Արարեալ խորենացւոյ երանելւոյն մովսիսի քերթողահօրն ի փառս այ և ի պայծառութիւն ազգիս։

Տպագրեալ։

Ի Հայրապետութեան Սբյ գահին էջմիածնի Տն Տն Եփրեմայ արժանաժառանգ և սրբազան Կաթուղիկոսի ամ հայոց։

Եւ ի Պատրիարգութեան Սբյ Քաղաքին Սաղիմայ Տն Թէոդորոսի երջանկազարդ արք Եպիսկոպոսի։

Հրամանաւ Անդրիանուպօլսեցի Տն Պօղոսի երանաշնորհ Արք եպիսկոպոսի և արժանընտիր պատրիարգի մեծի պոլսոյ։

Յամի Տն 1817։ Նոյեմբ'' 1։ Իսկ ի հայոցս թուականին ՌՄԿԶ։

Ի Տպարանի մայր Սբ Էջմածնի։



Նորահրաշ և գերապայծառ է տօնս · և զուարթախ հոգւոր ցնծութե̄ ը̄հանուր առձայնէ բոլոր հայաստանեայցս · մշտահոս առաքինութ̄ լուսերանգ պակեալ ծաղկօքն զանձինս մ̄ծասէրս , որք վկայիցն պատուծոյք ցնծան , և նահատակացն արբեամբ զուարճանան ·

Կուսակա՛ն է տօնս · և զլուսաւոր պսակս կուսական դասակցութ̄ց , երկնայնոցն բոցեղէն զուարթնոցն յորդորէ տօնակից լինել և զուարճակից աղքանացեան ալինս · զսա տեսանել փառացն ք̄րի փայլմամբ յայսմ աւուր



պսա_

պսակեալ և հրճուեալ։

Մարտիրոսական է տօնս, և ճգնաւորա
կան հանդէս. և զվկայիցն բոլոր պսա-
կակապ թագազարդեալ դասս հանդերձ
պայծառ և մեծ առաքելոց ն̃բց և մար
գարէիցն Մաճազգեաց պարուք կոչէ 'ի
նոր սիօն, պարակից լինել մանկանց ա-
ռագաստի զհոգևոր երգել զերգս երկ
նաւոր հարսանեաց 'ի փառս անմահ
փեսայինն։

Այսօր ցնծութի երկնի և երկիր. և ա-
մետիք մեծ երկնաւոր շնորհաց պայ-
ծառ լուսով շրջափայլեալ 'ի տան թոր
գոմայ 'ի հաւտցլոց ազգէ 'ի հոգիս։
Ցնծութի երկնի, զի լոյսն կենդանի՝ որ
փայլատակէր յերկնից 'ի հռիփսիմեանս՝
'ի սմա փայլակնաբորբոք ճառագայ-
թիւք բոցափայլեալ զանիծից պարա-
բառնայ զփուշ, և վկայական արեամբն
ոռոգեալ զերկնայինն 'ի սմա ծաղկե-
ցուցանէ արդարութե բողբոջս. բա-
նաւոր բուսոց բուրեալ զանուշահո-
տութիւն սաղմոսաց, և 'ի սմա հնչեն
փառք թագաւորին անմահի։



Նա

Այսօ՛ր ցնծութի՟ երկնի. զի յերկրի ըն-
կալաւ Ա՟ծազգեաց՝ զմայրն լուսականն ե-
դեալ պսակ, զգեցեալ զլոյս և զանմա-
հութի՟, և օրհնորդք խաչազգեացք ընդ-
նմա ծնրանազարդեալք։

Ուստական արե՟մբն ք՟ երկնագումարն
անցանելով պարս սրովբէիցն՝ մտեալ
'ի սրբութի՟ ս՟րբց՝ յառաջագաստն լուսոյ առ-
քանն փեսայացեալ՝ կալ ընդաջմէ նո՟,
դշխոյ մ՟ք յոսկեհուռն պսակեալ։ Ու-
զօրք հրշ՟տկաց փափագեալ խնդանեն 'ի
հոտ անոյշ ծաղկաձև վարդագոյն արե՟ն
վկայիցն. և հողեղենն 'ի հրեղենն միա-
ցեալ՝ որ զվկայիցն յաւէտ հրաշագու-
ցանէ զհանդէս։ Այսօ՛ր գերահրաշ
և լուսապայծառ փառօք զարդարեալ
ցնծայ եկեղեցի հայաստանեայց կու-
սականացս տօնիւ. որով զերրորդութի՟ն
ընկալաւ զլոյսն և մերկացաւ զհնութի՟
մեղաց։ Ճառանազգեաց արփիահրաշ
փայլմամբ Թագ 'ի գլուխ հրձուի, և
պարծի 'ի պսակիցն իւր Ք՟ս՝ զվկայիցն
տօնելով զհանդէս։

Այսօ՛ր յիշ՟տակ մ՟ք և մաքուր անարատ

Ք՟սի

Վասն հարսինն, Հռիփսիմեայ ասեմ և
որ ը՟ նմա աղջկեր զգաստուէ և մայր
հ՟աւատոյ գայիանէ, և օրհորդք սրբուէ
կուսանք իմաստունք, միշտափառ լու-
սով Ջահազգեաց ծագեն յարևմտից
զերրորդուեն համապայծառ լոյս ՚ի
հայաստանս փայլատակեալ աշխարհ:
Եկա՛յք այսուհետև ք՟ի նոր ժողո-
վուրդք և անթառամ ծաղիկք սրբու-
թէ, իմաստուն կուսանացն զպտուղ
բարեբանուէ աստանօր հատուսցուք
՚ի պատիւ վկայիցս: Սա՛ ուր կուսուէ
և իմաստուէ պարտէ. զկենսաբեր ող-
կոյզն բերելով՝ եկա՛յք փութասցո՛ւք
զանմահուէ խորհրդոյն կթել պտուղ:
և զա՟ծ ազգեաց զյարուեն բուրել ըղ-
հոտ. զկուսականս զայս վկայիցս մե-
ծարելով զտօնս, և զս՟ս մեր բարե-
համբաւեսցուք ասելով: Ուրախ լեր
և ցնծա՛ հա՛յաստան աշ՟, նա՛ր իէլ, երկիր՛
աւետեաց և դրախտ ա՟ծատունկ զար-
դարեալ տռապէլովք և մարգարտիւք.
և ո՟բցն լուսեղէն դասիւք՝ վկայիցն
որեամբ ՚ի քեզ մոլորուեն. շիջա՛ բոց
և:

և ճշմարտութեան ջահ վառեալ բորբոքէ
բոցալոյսն անաղօտաբորբոք ճառագայ
թիւք։ Ուրախ լեր և ցնծա՛ մարգարէական
աւետեօք լեռն Սիոն, կողմանք հիւ-
սիսի քաղաք թագաւորին մեծի. նուսական
որեամբքն 'ի քեզ մեղացն ցածեալ ջրհ
հեղեղ և աւետարանականն ահա՛ համ-
բարձեալ գետք զձայնս 'ի գնացս իւ-
րեանց, տիեզերատարած և լուսասփիւռ
հրահոսան վտակք զքոյդ արբուցանեն
դրախտ, բանական երկնային տնկոցն՝
յարազուարճ և մշտափթիթ լուսեղէն
կանաչութեան ծաղկեալ պտղով, ունելով
զգիտութիւն էական լուսոյն։ Ո՜վ ուրախա
ցի՛ր և բերկրեա՛ նո՛ր Սիոն, զարթո՛
զորդիս քո թմբկօք և պարուք յերգս
հարսանեաց. և ե՛լ Յիսուս երկնաւոր
հարսանեացն. զի ահա՛ գայ հարսն նոր
'ի լերանանէ զարդարեալ 'ի լոյս վայե
լուչ, արկեալ զիւրեւա՛ զարեգակն, և
զլուսին ընդ ոտիւք, և ճառագայթարձակ
փայլմամբ փոցն 'Քրիստոսի պսակեալ. գոչէ
առ նա խանդակաթ սիրով՝ համբու-
րեսցէս զիս 'ի համբուրից բերանոյ
քո. զի են զինի քո անձն իմ։ 7

Ի՛. Հօ՛ գայ հարսն կոյս՝ սլացեալ ՚ի Թեւս
հոգւոյն, բազմապայծառ լուսով հո-
սուԹե փայլեալ գայ ՚ի հանդիպումն
անմահ փեսային՝ ասելով, իւղ Թափեալ
է անուն քո, վն այնորիկ օրիորդք սի-
րեցին զքեզ։ Գայ ՚ի դէմս իւր ու-
նելով զարդարունե արեգակն, և աս-
տեղք լուսաճաճանչ գնովաւ ճառա-
գայԹեալ՝ զվոճառ բազմագին լու-
սոյն յարևմտից սփռեն տարածանեն
՚ի ծագս հիւսիսոյ։

Գայ խօսեցեալն իրաւամբք և արդա-
րուԹբք. սպաս պէ րեաւ արկեալ զպարս
հրանիւԹիցն պղօրս երկնից, և օրիորդք
խաչազգեացք զհետ նր հրճուէին ա-
սելով. ցնծացո՛ւք և ուրա՛խ լիցուք
՚ի քեզ. զի քո է ճշմարտապէս ուրախա-
նալ, վն զի՝ զքեզ ուղղունի սիրեաց։
Գայ մտանէ ցնծուԹբ ՚ի յառագաստ
արեան, տեսեալ զտր իւր ցնծուԹբ ե-
կեալ ՚ի նոր առագաստ ՚ի զենումն խա-
չին. հրով և արեամբ հարսնանեայ այնմ՝
որ ՚ի հուր ածուԹեն մաքրեաց զնա. և
արեամբն իւրով ծիրանաներկեալ խա-



չա-

հագգեաց լուսով պսակեալ՝ ինքեան
հարսնացոյց, որում հոգին մեր հովա-
նաւորեալ ածային հարսանեացն, անա-
պական կուսութն ծնաւ 'ի յոյս կեն-
դանի, այս է բազմերջանիկ և մեր կոյսն
Հռիփսիմէ, և այս է նր սպաս կու-
սութեան և փառաց:
Արդ՝ մն զի՝ որք վաղքայական հար-
սանեացն և կամ զհանդիսական մար-
տիցն դրուատեն զգովեստ, զնն և
զազգն պաճուճաբանելով՝ վերան պան-
ծացուցանեն: իսկ՝ որ 'ի մէնջս գովէ
հարսն մեր նահատակ յաղթօղ և կու-
սանք իմաստունք, ոճ ո՛չ 'ի ստորեցս ե-
րևութից պաճուճազարդ բանիւ ար-
հեստախօսեալ. այլ յերկնուստ 'ի վե-
րուստ 'ի հոգւոյն մեյ հրաշմամբ գո-
վեալ արեգակնապէս փայլմամբ ընդ-
երկնաւս փայլատակեալ:
Բայց մն կէ՝ պսակեալս այս 'ի հո-
գւոյն մեյ՝ հարսն մայր իմոյ հոգւոյս,
կուսութբ անապական զիս ծնեալ, և՛ի
գիրկս որբունե գգուեալ. կուսական
արեմբն զածգիտուե որբուցել կաթն՝

հաղորդեցոյց զիս 'ի բանն կենաց, և
բնաւորութեանն այն 'ի ծննդոց առ մարս
առանց ուսման բնաւորել գուլթ՝ զիմս
ստիպէ դեռաբոյս անձն, զսրբոյ մօրս և
զկուսի Աստուածավայելուչ փառացն ներ-
բողել 'ի յարախմբմունս հոգևոր սա-
րա ծննդոց. յաղագս այսորիկ՝ սկսայց
զասուլն 'ի բազմաց՝ առաջնորդ ունե-
լով զբանն կենաց:
Այս որ ամենուն յայտնի է, 'ի հռոմայ-
եցւոց դերապայծառ նահանգէն 'ի
ծիրանափառ օգոստականացն կայսեր
երկնային բուսածն ծաղիկ, առաքելա-
կան արեամբն Պետրոսի, և Պօղոսի,
յանդս հոսեալ ոռոգեալ փթթեր ծի-
րանազգեստեալ մաքրութեամբ 'ի կուսական
գիրկս Սրբոյն Գայիանէի 'ի վկայարանս
նոցունց՝ մերձ առ սեղանն սբ՝ սնել
զորդանայր հասանել 'ի չափ հասակի
կատարմանն առաքելական հաւատոցն:
'Ի նոցունց իսկ փեսասիրացն Լ̃ծաղ
դեաց յարմարութեամբ հարսն առ բանն ըն-
ծայի, առաքելականաւն հրճուել զար-
դու վկենդանական զգաստութիւն աբ-


կեա

կեալ զէրէն ։ բազմալոյս առաքինութբ
պճնեալ, երրորդութեն համապայծառ
լուսով պսակեալ, 'ի պատկեր ստեղծ-
չին հոգւով կերպարաներ · անաղկն և
անեղծ կուսութբ առագաստեալ՝ մնայր
քոյին երկնից արքային ։ Ո՛չ միայն հոգ-
ւոյն մաքրութբն բազմապայծառ կու-
սութեն ճառագայթեալ փայլմամբ · այլև՝
քան զամ ոսկի սրբեալ և մաքրագոյն
ունելով, որպ արդարև ճշմարիտ լու-
սոյն հայելի, արեգակնապէս փայլեր
մարմնով՝ գեղեցկապէս տեսլեամբ քան
զծնունդս կանանց ։ Նորգեսցէ զայսու-
տիկ ը մեղ և հոգին ոք, ամ փառք դըր-
տեր Թգւրի 'ի ներքուստ, հարսն քոյին
հարազատ · գեղեցկուհի շտեմարանեալ,
պատկեր կենդանի լուսոյն, նուէր ան-
կողոպտելի, անդաստան ընծայեալ այ,
անկոխ բուրաստան անմահութե խոր-
հրդոյն, ծաղիկ անթառամելի կենացն ·
հոգւոյն սեղան, այ խնդանոց, աշտա-
նակ բազմափայլ լուսոյն, աղբեւր կըն-
քեալ ը սողոմոնեան երգոյն · միայն
պահեալ սրովբէից արքային · բանաւոր

դրախտ երկ՟րդ ադամայ՝ հրեղէն պա-
րուքն շուրջ փակեալ․ յայս դրախտ
նախահայրն ջանայր մտանել օձ․ ո՟պ ՚ի
սկզբանն հակառակ առ՟ջին ստեղծուա-
ծին․ լրբենի խուռովք չարու՟թքն կո-
ղոպտել ջանայր ո՟պ զդաւաճանօղ կինն․
զբանին հարսնացեալ զբազմերջանիկ
կոյսն յա՟ծագեաց փ՟ոցն․ անյագն ՚ի
չարիս․ որ և ՚ի հրեշտակացն մտ՟ել պարս
զյօքն հայցէր, և զ՟որ տեսեալ կեր-
պի՟ յանցաւորի մարդոյն, ՚ի վ՟ր ըն-
թացեալ մարդկութ՟ենն փորձէր, անգի-
տացեալ թէ կործանելոց էր մ՟ծութ՟բն։
Սա զկերպարանեալն ՚ի պատկեր արա-
չին զկոյսն՝ հովանաց՟ել զօրութ՟բ բարձ-
րելոյն․ տեսեալ ՚ի կերպի յանցաւոր
կնոջն՝ հնարէր ը՟ մահուան արկանել
թունիւք։ Փոխանակ գեղեցկապատիր
պտղոյն, զսակրաւկուռ ծիրանազարդ կայ
սերական պատուով շքեղացե՟լ գուսոզն
հռոմայեցւոց, մոլեկան տրվանօք ՚ի
տենչանս բորբոքէր հարսնացուցանել
ինքեան․ զի այնու հանիցէ յերանութ՟ց
դրախտէն զ՚ի պօղոսէ առեալն, ք՟ո



հարսն

հարսն կոյս մի և մաքուր աղաւնի · ո-
րոյ վարձանս առեալ էր զդրախտին
վայելչութն · զարքայութն անանց , զու-
րախութն անվախճան , զլուսոյն որդեգ-
րութն առագաստն · զլուսոյն խորանս
և զպարս ցնծութն՝ զհրանիւթեց ջոկս ,
և ամենայնում վառեալ սիրով՝ տենչայր
արդարութբ երևել մտացն այ , լինել պը-
սակ վայելչութն 'ի ձեռսն տն , և թագ
արքայութն 'ի ձեռսն այ · զնա ժպրհէր
փորձել չարն՝ անգիտացեալ թէ՝ նո-
վաւ լուծանելոց իցէ գոռոզութի նր
հանդերձ օձին նզովիւք · և կուսութն
նր որդեկք լուսոյ՝ զչարութն նր կոխել
փշրեն զգլուխ , անխռած գարշապարօք
գնալ զերանութն ճանապարհն , հրաւի-
րեալք 'ի լոյսն , փառաւորեալք՝ ուստի
նայն կործանեցաւ :

Որդ՝ չարին այսքան , իսկ կուսին զինչ ·
զփեսաւիրացն խանդաղատական արձա-
կէր ձայն , թէ ո՞ մեկնեսցէ զմեզ 'ի
սիրոյդ քումմէ · և թէ՝ աչս մեք թո-
ղաք զամն և եկաք զկնի քո · և թէ՝ ամ
կեցցուք և ընդ քոյին խաչեսցուք · և թէ՝

 ընդ

ընդ հովանեաւ՛ն նր̃ փափաքեալ նստա-
ցուք, և աջ քո ընկալցի զմեզ՝ վս̃ կե-
նարար փրկչին. զի ասաց օ՛ն արիք գը-
նասցուք աստի: Զարթուցեալ այնու-
ձայնիւ՛ն զու՛արթութիւն մք̃ սերովբէն հո-
գեղէն՝ իմաստուն կուսանացն դա-
սուք, սլացե̄լ ՚ի թևս հոգևորս զգաստ
և մաքուր կուսութե̄ն, համանման թե-
թև ամպոյ, յոր տր̃ն նստեալ մտանէր
յեգիպտոս. վերանայր ՚ի ծագաց երկ-
րէ ՚ի գլուխ լերանց. որ անդ նստէին
և զընդ երկնաւ՛ն շրջափակեալ լերինք՝
յորս ա̃ծն հանգչէր. որք ըս̃ մարգարէ-
ութե̄ն ցնծան առ̃ջի տ̃ն պետրոս և պօ-
ղոս. ՚ի սր̃ց գրկաց լուսաւորս այսգտաւ՛ն:
Ամպք որոտատեսիլ զանձրև հոգւոյն
մր̃յ հոսեն. և ցօղե̄ն ՚ի ծագս հիւսի-
սոյ յն̃ այրարատոյ, յանդաստանս
երկնաւոր մշակացն Թադէոսի և Բար
թուղիմէոսի մր̃ց Առաքելոցն՝ զու՛ար-
թացուցանել զբազմածաղիկ քարոզու-
թե̃նց բոյս: Ծագեալ եհաս առաւօտն ան-
ստուէր լուսոյն բազմաստեղն լու-
սով առ ղամբարաջահ պարուք հոգևոր

ատ-

աստեղացն, աւետարանել զծագումն
արեգականն արդարութեան. որ բազմափայլ
ճառագայթարձակ լուսով երեք հնգից
ամօք 'ի ծոց երկրի ագանէր, ելանել
և զմշտնջենաւորն առնել տիւ այսմ աշխի:
Պարունակեցաւ ամփոփեցաւ ճառա-
գայթն բազմալոյս 'ի հնձանս նորոյ
աշխս, 'ի կենաց որթոյն մեզ բարու-
նակացել պայծառ և կանուխ ողկոյզ՝
կուսութեան բաժակաւն մեզ արբուցա-
նել զարիւն խաղողոյն՝ որ 'ի խաչին հա-
րաւ հնձան, և արբոյց տիեզերաց
զանմահութիւն:

Խռովեցաւ պագշոտեալն այն գոռոզ՝
չարին արքանեակ, համանման հերովդի
տեսեալ զինքն 'ի կուսից խաբեալ, և
սաստկապէս ցասմամբ գոռալով շարժէր
զտիեզերակալ իշխանութի իւր, և կա-
տաղի ցասմամբ Թափէր զդառնութի
իւր 'ի հիմունս եկեղեցւոյ, քանդել
կործանել և արեամբ մկցն զտիեզերս
արբուցանել: Նզդ առնէր յարևելս
արևմտեանն այն չար, զպարթևազանց
շարժէր զօրութին 'ի խնդիր չքնաղ

 մար

մարգարտին՝ գանձին ծածկելոյ ՚ի
հնձանս նոցա տէրութեանն։

Սողէր շրջէր ընդ տիեզերս սկզբնա-
կար օձն. զԹոյնն մահաշունչ ՚ի Թա-
գաւորսն արկեր, և ՚ի զօրս նոցա.
պտուտէր շփոթէր զընդ երկնաւս ՚ի
մարտս վկայիցն, զշարէր տեսանելով
զառ ՚ի յինքենէ զեռաբեալն ազգ կա-
նանցն. զօրածողով ՚ի վերայ լինել
երկինչէր, տեսանելով Յաղթահա-
րեալ զինքն ՚ի Մարիամայ սրբոյ կու-
սէն, Թէև նորին գստերբն Հռիփ-
սիմեաւ. և ՚ի բոլորն լուծանելոց էր
՚ի տիեզերապետութենէ։

Նստանոր ձառագայթ ճշմարտութեն
՚ի Հայաստանս փայլէր ս̃, և ձայն
աւետեաց հնչէր ՚ի տանս Թորգոմայ։
Քանզի շփոթեալ տէրութեն պա-
Թեաց խռովէր մեծայոյզ քննութբ ՚ի
խնդիր ելեալ բազմալոյս անյայտ մար-
գարտին. որ զնոսայն եկեալ էր մե-
ծացուցանել յանանց մեծութիւնն,
և քաջութբ պսակեալն հոյակապ յաղ-
Թութբ սկայազօր արքայն քաջարանց

 սէգն

A
1083

սեգն Տրդատ մոլեգնոտ տոփանօք
տենչայր առթել ինքեան զեական
լուսոյն հարսնացեալ դշխոյն , որ
զնոյն էր առթելոց իւրում փեսա-
յին. և զորս պարթևք զարքայական
հարսանեաց փողովք և սրնգօք փո-
թային յարդարել զպարն այնմ՝ որ
եկեալ էր գրել զնոսա 'ի զօրս զօրու-
թեանց արքային երկնից , օրհնութ̅
երգով սաղմոսաց յանմարմնոցն հպե-
ցուցանել զպարս , և օրհնորդք թագա-
ւորազունք , և կուսանք հայկազեանցս
ոսկեակուռ. շքեղաշուք երփն երփն
զարդուք թմփկօք և պարուք գային
տանել 'ի սենեակ արքունի , զայն՝ որ
եկեալ էր զնո̅ հարսնազգեստել եր-
րորդուե̅ն լուսով՝ գրել 'ի դստերս
վերին սիօնի է̅ լուսերամիցն դասս
յանեղաշէն առագաստն հար-
նարանին.

Այ՛ նորա զայս , վկայն զի՛նչ. մայր
զգաստութե̅ և սրբութե̅ առաքելուհին
Գայիանէ , որ հոգևոր շնորհացն էր
աղբիւր. որ զմարգարիտն զայն լուսա-

Որ կուսական ակամբք կենդանեօք
մեծաջան երկամբք հիւսեր պսակ
սերովբէից արքային. զվկայական իւր
բացեալ զբերան քաղցրաձայն վարդա-
պետութ̃ յորդորէր զծնեալն 'ի յին-
քեան, և զօրիորդսն զհետ Քի̃ հար-
սինն մշտալուսովն փութալ 'ի նշա-
նակեալ նպատակ պսակահամբար քո̃ա-
դիր կէտին, մեղր կաթեցուցանելով
'ի շրթանց իւրոց Քի̃ քոյր, և հարսն
Գայիանէ. մեղր և կաթն լեզուաւ
իւրով կաթեցուցանէր 'ի լսելիս սր̃յ
կուսին Հռիփսիմեայ, զքաղցր նորա
յիշեցուցանելով զսնունդ, զհայրե-
նեացն լքանել ծիրանազարդ զփառքն,
զհարսնանալն Քի̃. զնորայն վասն մեր
զթափումն. զ'ի խաչին զենումն. զմիւ-
սանգամ նորայն գալուստ. զահագին
ատեանն. զանապական պարգևսն.
այսոքիւք աւետարանական վարժիւք
մարզէր զնահատակն մեծ 'ի հանդէս
կուսութե̃ յաղթողով մարտոսն՝ ըղձեմ
խրոխտ ախոյեանին. դուստր կոչելով
զնա առաքելոց և մարգարէից. և 'ի



նո

նոցունց) առթեալ Պետրի։ Այն նա զայս, իսկ նահատակն առ նահատակագիրն ՚ի վե՛ր զաչսն՝ ՚ի գերաշխարհիկ կանայսն ամբարձեալ՝ զնա կոչէր յօգնականութիւն. զո՛, զտէրն իւր և զած, զփեսայն անմահ, որ զշուշան փրկեաց, և զԹեկղ ապրեցոյց, և ՚ի հնոցն ցօղարկեաց. Ը նորայն տենչայր հովանաւորել Թեւօք և ապրել յանարժանիցն։

Լուաւ աղօթից կուսին Թագաւորն՝ որ ցանկայր գեղոյ նորա, և եցոյց նմա զինքն ահաւոր կօլուէ երկնից, ահեղ որոտմամբ զլկտեացն ահաբեկեալ ցրուեաց զզօրսն, բանայր զհաստատութիւնն, կոչէր յանուանէ զիւր հարսն, զինքեան նմա ցուցանելով զանձառելի զփառսն, զլուսոյն խորան՝ ուր հրաւիրեցաւ. զբազմապայծառ նմա պատրաստեալ պսակ. զպարս հրեշտակաց՝ որք սպասեալ |մնային| առ դուրս երկնից՝ զնա ընդունել յառագաստ, խոստանայր Ը նմա լինել յաւիտեան, և նովաւ զնա զայս

հաշտեցուցանել ընդ ինքեան. և անեղա-
բանական լուսովն լնոյր զոլորտս հիւ-
սիսոյ: Սօրագան ՚ի ձայնէ փետայրեն
կոյսն. դիմեաց ՚ի հանդէս առ ախո-
յեանն՝ որ գայր ՚ի վ͞ր մրրկել խաւա-
րին խտղտմամբ մարմնոյ և մեղաց. ե-
լանէր ՚ի ճակատ մեղացն մարտի սպա-
նանելով զմեղս և զգտող նորին: Ար-
դարութեամբ վառեալ ՚ի զէն և ՚ի զարդ-
երկնաւոր նահատակին իւրոյ հօրն՝ որ
տիեզերաց ըմբշամարտիկ նովին առա-
քելական սպառազինել զբահիւք հա-
ւատոյ զնորայն եդել սաղավարտ յու-
սոյ, զվահան հաւատոյ. նոյնպէս զկա-
մարն ընդ մէջ ածել արդարութեամբ, ունելով
զսուսեր հոգւոյն, զնորայն գոչէր կու-
սական փողովն ձայն՝ ընդդէմ մեղացն
մարտի թէ՝ Ա՛ զէն վարատեսցէ ՚ի սէ-
րոյն Քրիստոսի. սուր. հուր. խաչ. յօշոտմն
մարմնոյս. կոտորածն ոսկերացս. այլև
ո՛չ հանդերձեալ յաւիտեանքն կարեն
մեկնել զիս ՚ի կենդանի սիրոյն՝ ո-
րում եսն հարմնացայ:

Յարգարէր ճակատն. ձգեալ լինէր ՚ի



դահ-

դաշնակաց կոյսն բանաւորութե փակեալ
՚ի սենեակ արքունի ՚ի յասպարեզ կու-
սութե․ դարձեալ ՚ի վեր զաչսն ամբառ-
նայր, դարձեալ կուսական մաղթանք,
դարձեալ պաղատանք փարելիք, դարձեալ
խանդաղատական արտասուք և աղօթք
աղերսալիք․ Ո՜ւ ո՜․ որ զծովն եհերձ,
և զՅորդանան սանձեաց, և զմրգրեն
կորզեց ՚ի չխոտեն, և զմահ կապեաց, և
զքաղդեացին ամբարձեալ գոոց՝ ՚ի
ձարկէնոցն արտաքսեաց խուսմբս։ Այն
աղաչէր կոյսն զզօրութի հովանի իւր լի-
նել, ասելով՝ զարթո՛ զզօրութիւ քո, և եկ
՚ի կեցուցանել զիս, եկեսցեն յիս գը-
թութիւնք քո և կեցից, զի քո եմ ես և կեցո՛
զիս։ Գայր հասանէր մերձենել ը̅ դիմա
մարտն, շամբշել կատաղի պայլմացմամբ՝
ճեղացն բորբոքել բոցով, այրել խընդ-
րեր զանթառամ կուսութե բոցատերև
վարդն, որ կենացն փթթէր ցօղով զհո-
գւոյն զգեցել զօրութի․ դիմէր և կոյսն
՚ի հանդէսն։ Ո՛ր էր հանդէսն․ ՚ի վեր
քան զմիտս և զբան հրշտակաց և մարդ-
կան, դիմէր ՚ի հանդէս կոյսն խաչազ-

գետաց առ ծիրանազգեստ արքայն, որ
փառէլ 'ի զարդ և 'ի Թագ հարսանեց: Մտանէր 'ի հանդէս կուսանն՝ որ խաչիւն
էր պսակէլ և խաչէլ նի, առ այն՝ որ
խրոխտացեալ Թագիւն զգլուխն ամ-
բառնայր, և ոչ փեսայ յորդորէլ ցըն-
ծայր յառագաստի: Հարկանէր կուսան
'ի դիմի առ արի սկայն, որ փքացել զօ-
րութ զոխեզերս դղրդէր և գոռալով
խրոխտայր ընջել զզօրութի մարոց և
պարսից: Եղանէր 'ի ճակատ զգաստութ
վառէլ կուսան առ պագշոտեալ վերագն
աչագին, որ ըստ առակաւոր բանին 'ի
սիգալն իւրում աչերէր զԹումբս
գետոց և ցամաքեցուցանէր զյորձանս
ծովու, բռնաւորն պերճացել զօրութ
հանդիսից՝ որ 'ի մարտս պարսից զփղացն
պուղէր զերամակսն. և յոմբշամարտս
յունաց զՑլուցն ձեռամբ Թափէր զեղ-
ջիւրսն. և բռամբ զսկայսն հերձուցա-
նէր. 'ի դիմի հարկանէր կուսին, որ
զխաչն ունէր ըստ ուսն, և ոտնչայր ծա-
րաւի սիրով խաչակից լինել կուսա-
ծին արարչին:

Արդարև նոր՛էր հանդէսն. զոր Հր–
րեշտակացն ընդ նոցին սքանչացեալ հան–
դէսն, սոսկացեալ փառս երգէին կու–
սածին արարչին. սաստկանայր հանդէս
ընդդիմամարտիցն. մերձենայր ժամա–
նակ պսակացն. քանզի յաղթեալ կոյսն
զօկայն, յաղթեալ լինէր արքայն. վա–
նէր կինն վանեալ լինէր հսկայն. զգետնի
հօրկինէր կոյսն մանուկ զտիեզերաստեղ
բռնաւորն. զթագն փշրեալ. զարքայա–
կան զարդն կողոպտեալ. կուսին անկո–
ղոպտելի մաքրութեան՝ անապական մնացեալ
զգեստ, ընդ ոտիւք կուսին զգետնեալ տա–
պաստ անկեալ կայր վիշապն մահաշունչ.
որ կուսին արեամբքն էր կենդանակեր–
պելոց ՚ի պատկերն երանութեաց. քանզի
կուսին՝ հովանի էր բազուկն՝ որ ՚ի խա–
չին բարձրացաւ, որ զերկինս ձգեաց և
զերկիր հաստատեաց և զծով սանձեաց.
և բարձեալ ունի զա՟մ:

Աստաջոյն խուրով ընդգրկէր զանհասե–
լի կոյսն առ ինքն ձգելով. և ահեկաւն
առ նպատակն ընա ուղղելով. և վ՟ զի
գիշեր էր ժամ կատարման հանդիսիցն.


այլև

այլև անածուե խաւարին մութ պա-
տէր՝ զոր անդն կայինն, սակայն ոչ
փայլակն արագաշս ցոլանայր 'ի սենե-
կէն զմեղաց հերձանելով ծով. ան-
թաց ոտիւք գեղեցիկն 'ի լիբանանէ
կոչեցեալ քնի հարսն, մաքուր աղաւնիք
զտերև ձիթենւոյն ունելով 'ի բե-
րան, զհոգւոյն աւետիս տալ այնմ՝ որ
'ի խորս էջ անդնդոց, ոչ նոյ 'ի ծոց տա-
պանին, հնգետասանամեայ տքնեալ
սպասէր աւետեաց հայր մերոյ Տէս,
հոգևոր լուսոյն ճառագայթ, քաղոզ
փածնին | ուսաւորիչն մեծ. թռու-
ցեալ վերանայր 'ի թևս հոգւոյն լու-
սազգեաց աղաւնի, զքաղցրաբարբառ
աւետեաց հնչումն 'ի հնձանին առձայ-
ներ, որք անդ նստէին տրտմազգես-
տեալ զգաստիցն դասք.
Օ ուարձացի՛ր |ասէ| և ուրախ լեր
Գրայիանէ մայր որդւոցն լուսոյ. ու-
րախ լեր և ցնծա՛ անապատ ծարաւի մի-
ջարեւական օրհնութե, ահա ծաղկեցար
ոչ շուշան և զանթառամ վարդ իմոյ
կուսուես 'ի քո գրկացդ բուսեալ փթթե-


ցեր

՚ցեր ՚ի փառս և ՚ի պարծ հայաստանի տեառ
Տ՟րդ՝ էկ մայր իմ յուղարկեա զիս յա-
ռագաստ առ բանին՝ ուր հրաւիրեցայն.
փութա՛, ես ճեպեմ, զի եղբօր որդին
իմ էանց, և ոգի իմ ել ը բանի նր.
երիթամ խնդրել՝ զոր սիրէ անձն իմ.
ուր հովուէ, ուր հանգուցանէ. ՚ի
շուշանս, ՚ի բուրաստանս, ՚ի վայրի դա-
լարուոյ, առ ջուրս հանգստեան, զի ը
հովանեաւ թևոց նր և ես հանգեայց
յանստուէր լոյսն. էլ տէ՛ս զկոյս նա-
հատակս. զհնձեսն կտրեցի, զախոյենն
հարի, զպատերազմն վանեցի, ՚ի մարտի
տապս պանծել ծարաւի իմ. տենչամ մեր-
ձենալ ՚ի հոգևոր կենաց աղբիւրն, որ
՚ի խաչին մտ իմ ծարաւեալ՝ ՚ի գողգո-
թայն վիս առաձայնէ ծնքեան խաչակ-
ցել: Ի՛կ տէս զիս, մաքուր իմով կու-
սութս ՚ի խաչին զնուվաւ արկել գիրկս
արիւնաներկ իմով շրթամբքս զաղբիւր
մտծային ըմպելւոյն յիս ձգելով, զոր
նոյն ծարաւեացն աղբերացոյց բղխ-
մամբ ջուր ՚ի կողէն, յորմէ զիս հարօն,
զոր ըմպելով և ես եղէց աղբիւր ջրոյ



կեն

կենդանւոյ խաղացելոյ 'ի կենանեան յա-
ւիտենից։ Այժմ ձեզ ամենայնք գաւառք
նոր սիոնի. երանամիտ լուսերամբ և
կուսանք իմաստունք, ելէք և տեսէք
զդշխոյն ձեր զՀռիփսիմէ, պսակօքն
որով պսակեաց զնա տէր իւր յաւուր նորա
հարսնութեան. փութացարուք և ելէք, ես
ձայնեմ, եղբօր որդին իմ էջ 'ի պար-
տէզ խնկոց կթել զմուռս. երթամ և
ես ընդ նմա 'ի լեառն զմուռսոյ 'ի մահու նորա
վայրն, զի ձիօք ելի ընդ նմա ամպօք 'ի
բլուրն կնդրկի 'ի վերայ Սփուէ լու-
սոյն։ Թողէք զհնձանդ, սլացարուք 'ի
թեւս հոգւոյն միաւոր աղաւնիք և օ-
րիորդք իմոյ հարսանեաց։ զվարդա-
գոյն իմոյ հարսնութեան արկի զզարդ.
ելէք ընդ առաջ արփւնաներկեալ կար-
միրազգեստ իմոյ փեսային. զի և դուք
ընդ իս փայլեցէք արքունական նորա ծի-
րանեօք 'ի փառս և 'ի զարդ հրեշտակաց և
մարդկան։ Ձայն ամենեաց հնչեցէք յա-
րեւմուտս, փող 'ի հռոմ հարէք. զօրա-
ձայնեցի՛ր և ուրախ լե՛ր տիեզերական մայ-
րաքաղաք՝ որ նստիս յարեւմուտս աշխա-



քե

քերաջաց պատկերաւ լուսով Յարած
ճառագայթիւք, դասերք քո ծիրանա-
զգեստեալք, լուսով ճառագայթելք
փայլեն յարևելս ՚ի հանդիպումն այնմ՝
որ ծագէ յարևելից, եղեալք դասերք
նոր սիօնի, և օրհնողք և պարողք լու-
սոյ հարսանեաց։ Ուրախ լեր և ցնծա՛
հռո՛մայեցւոց եկեղեցի, մայր Հռիփ-
սիմեայ և հարսն անմահ փեսային,
հարսն առաքելական, որ ամենատարանին
Թևք ՚ի քէն սլացան յարևելս, այսօ՛ր
մտանէ յառագաստ ծիրանազգեստեալ
արևամբ բաժակին ը͞ տ͞ն ՚ի խաչին, ա-
ռել պսակ անապականն կուսութ͞ ծն͞ել
զարևելս ուստերս հօրն լուսոյ։
Այ՛ ձեզ ամենտէրք Վ͞րի առաքեալք և
իմ փեսամ͞էրք, ահա՛ գնամ յառագաստ
՚ի ձէնջ հրամ͞իրեալս․ ուրախ լերուք՝
զի սիրեցի զձ͞րն, որ ՚ի ձէնջ հրամայե-
ցայ․ զձ͞երդ բարձ͞ոք մարտեայ մարտ․
պահեցի զհամ͞ատսն․ կատարեցի զըն-
թացսն, խաչեցայ ՟Տի, մերկացայ զինին
մարդն, մեռուցի զանդամս երկրա͞յս․
սպանի զախտս, դատապարտեցի զմեղս․

չէջուցի զցանկութիւն նոցա զբոց, յաղթեցի
հեշտութեցն, խայտառակեցի զօձն, կա-
պեցի զնոցա թոյնսն, կոխեցի զմահ, ա-
ւեալ զխաչ իմ՝ երթամ զհետ խաչե-
լոյն յառագաստ նոցա չարչարանացն:
Եւ կայք ցնծացէք յիմ նոր հարսանիսս,
զվարդագոյն իմոյ փեսայիս՝ արեանն և
հրոյ արկեալ զարդ ՚ի խաչէն, ընդ նմա
առնում թագ՝ որում եստուք զխս հրաւն:
Զայն երկնաւոր առեստեց ՚ի քեզ հնչեց
հայաստան աշ: ասպարեզ հանդիսի և
առագաստ իմոյ հարսանեաց արեանս
հոսանաց: Ուրախ լեր և ցնծա՛ զի մե-
ծացոյց տէր զառնելն ընդ քեզ, ահա՛ ցը-
ղեմ զցօղ քաղցրութեան զկուսական արեան
իմոյ զշիթս՝ դալարեցուցանել զվայրս
քո աստուածգիտութեան, զհովիտս քո շուշանա-
զարդել մրփրեխին ծաղկօք, զառաքե-
լականն ՚ի քեզ փթթել բուրաստան:
մշակել զքեզ դրախտ իմում փեսայեն,
ով զի՝ իջցէ եզբօր որդի իմ ՚ի պար-
տէզս իւր և կերիցէ զպտուղ ծառոց
իւրոց: Բերկրեա՛ այրարատ՝ Մ ծաղար-
դեա՛ առեստեղք, ահա՛ եղանեմ ՚ի քոյդ



դող-

գողգոթայ՝ ըմպել զբաժակ չարչարանց
արարչին՝ իմոյ կուսութեան բաժակաւս,
արբուցանել քեզ ծարաւոյդ զկենդանարա-
Ի՛րեան զբաժակ անմահութեան և լուսոյ։
Ի,ւ քեզ ամենեանք երկնաւորք նահատակք
և քարոզ փրկութեան բազմափայլ ճառագայթ,
որ ծածկեալդ ես ՚ի գբի, ահա՛ հասի
քեզ ՚ի թիկունս սլացեալ յարեւմտից
յարեւելս թեւթեւընթաց ամպով իմոյ
կուսութեանս· զփայլակնաբորբոք ճառագայթ
տիեզերածաւալ լուսոյ ամենատարանին
իմոյ հարց պետրոսի և պօղոսի, ՚ի վայրս
քո եկի ծագել, վանել փարատել զմէգ
խաւարի, որ գոյդ արգելեալ փակել
զկենդանանի լուսոյդ ճառագայթ։
Ողագեա՛ լուսաւորդ մեծ ՚ի խորոց
անդնդոց քաղցրանուագ լուսովդ՝ զ՚նար
ձայն ճառագայթալոյս փայլմամբ քոյ որ
բոց հարցն ամենատարանին թադէոսի և
բարթուղիմէոսի, երկաքանչիւր լու-
սով փթթել զհիւսոսի։ Հա՛ր զխորան
քո յարևու, և ել ա՛րեգակն սրբութեան
՚ի գնացս քո ցնծութեամբ՝ յորջոյն արի-
նազգեստեալ հարսին, որ մարտիրոսկին

արեամբ ձգնեալ, եկեղ ՚ի քո խորանիս
հարսնարան անմահ փեսային ։

Ա՛կ պատահեա՛ ծածկել ողորմութբ ե–
մուալ ճշմարտութես, զի իմ և քո խաղա–
ղութիւ՝ համբուրիս հարցն մերոց
յողջոյն և խաղաղութի զայս լցեալ ձն ։
Ա՛հա՛ բացի զերկինս, զորոտումն ձա–
գւոյն մբլ ՚ի դաշտս քո հնչեցի · ցօ–
ղեալ զցօղ քաղցրութե ՚ի հովիտս՝ ա–
րեամբ առոգեալ զուարթացուցանել
զորդիսն արդարութե ցօղ՝ քոյոց բու–
սոց ։ Ա՛շխատեալ երկրագործ, Ա՛հա՛
խլեցի յանդէ քումմէ զփուշ անիծից ·
զտատասկ մեղաց՝ կուսական խմով
հանդիսիս ։

Ա՛լ սերմանեա՛ սերմանահանդ քաջ
զսերմանիս աւետարանին լուսոյ, որպ զի
՚ի հասանել հնձոցն ՚ի միասին ցնծասցուք ։
Ա՛հա՛ զխմս ՚ի քոյդ խառնեալ արեան
վտակս, շիջուցանելով զխաւարային
բոց · փառել բորբոքել զհուր Ա՛ծութե
լուսոյն՝ առ ՚ի սրբել զանդաստանս ա–
րեամբ քո ներկեալ ։

Ե՛լ անկեա՛ մշակդ քրտնեալ զորթն կե–
նաց ։

նաց, զողկոյզն ծաղկեալ, զմշակեալն 'ի
հօրէ զորթւոյն խաղողոյն՝ վկայեալ մբ
աջօվք, պաշտեալ յուրախութի վերնոց
և ներքնոց 'ի տաճարի իմոյ հարսանեացս։
Ահա ճմլիմ 'ի քո հնձանսդ՝ կուսութե
իմոյ ողկուզիւքս. եկ արբո՛ այսու բա-
ժակա՛ս զանմահութե հոսանս պարգեւ
քո ժողովրդեան զհրով և սրով կոտո-
րեալս. զվարդապետութիս մերոյ ծաղ-
կանցս, և ժողովեա՛ բոլորել պսակ քո
ժողովրդեանս. զի այսու միայն առ
մեզ 'ի յարկսն լուսոյ։
Ցնծա՛ և ուրա՛խ լեր և դու վերին Սի-
օն, քաղաք կենդանեաց և առագաստ
իմոյ սրբութե՟ս. ազատ մայր իմոյ Հօրն
պօղոսի, և ամ որդւոցն լուսոյ, բա՛ց
զդրունս քո և ընկա՛լ զհարսն առ բանն
հրաւիրեալ. զնորայն արկել ծիրանիս,
և խաչիւ պսակեալ գայ մտանէ յառա-
գաստ, և կուսանք ընդ նմա։
Ամբա՛րձ զաչս քո սի՛օն, և տե՛ս զդս-
տերս քո իբրև զամպս թռուցեալ,
իբրև զաղաւնիս երամացեալ, պճնեալ
'ի գոյն արեան պհետ Հռիփսիմեայ



դրս-

պատեր Թագաւորին՝ զոր կոչէ բանն 'ի սենեակ Թագաւորին. Նաև դուք վսեմք հրեշտակաց համադասակից իմոյ կուսութեան մարտի ցնծութեան, եկէ՛ք ժողովել զհոգիս աշխատեալս, որք հրոյ և արեան մարտիւ պսակեալ՝ փութամք հասանել

յաղթութեանն կենդանի.

Աւետիք ցնծութեան և քեզ մայրդ լուսոյ Մարիամ, աղբիւր մաքրութեան. զի քո լուսովդ մերկացայ զանէծան, արկեալ զինև պճնազարդ սրբութեան լուսոյ քո. և գամ հարսն որդւոյ քո, զարեան նշխր վարդագոյն 'ի գլուխ ունելով ըղպսակ, ընկալ զիս ցնծութեամբ հանգչել 'ի լուսոյ քո յարկս, զի հրոյ և արեան մարտիւ շիջուցի զբոց մեղաց, և անթառամ զվարդ կուսութեան իմոյ պահելով՝ ծաղկեցուցի զտիեզերս ցօղով իմոյ արեանս. Փափագեալ յողջոյն քեզ տենչմամբ մայրդ լուսոյ՝ մոյծ յուգստ 'ի սրբութի սրբոցն՝ առ Թագաւորն, որ ցանկացաւ գեղոյ իմոյ, զի յագեցայց

և ես 'ի փառաց լուսոյ նորա.

Ա յարքին 'ի կուսէն մեծաւ ձայնիւ հրե-

չեցեալ երկնի՛ր ցնծութ՟՝ որ զբոլորս
լցոյց խնդութ՟, վասն մարդկեց. զերկիր
երկրին երեւեցոյց, զդրախտն եբաց, զան-
մահութե նոր ծաղկնց հոտ՝ բուրեց ընդ երկ-
նաւս, զկամարն երկնից ցոլեց, և զհոգե-
ղէնս ՚ի հրաբոսնս մերձեցոյց սեաւ-
լուսով զամենայն կուսութն՝ վանեալն ՚ի
կուսածին լուսոյն՝ խաւարասէր վիշապն
մահաշունչ, որ ապականեցաւ. ՚Քանզի
զինուն՝ որով զմահուն ՚ի սկզբանն խառ-
նեց զթոյնս ՚ի բնութ՟ կուսին առաջնոյ.
նովին զինու աւանէր զինքն հերձել,
և սպանել զմեղացն թոյնս. վկայեալ
այսու կուսին, որ ՚ի մարմնային էր լու-
սոյն նկարել կերպ. քանզի չարն ետես
զինքն լուծել և պարտեալ՝ փութայր
ապրեցուցանել զծառայս իւր արեամբ որդին.
և զէնս գործեր, զկատեցն մոլեգնեալ
պարս, ընդ երբայեցւոցն՝ երբեմն կառա-
ղել զայլուցմամբ վառէր ընդ մութ գիշե-
րոյն տասներօք և ջահիւք զհետ քսի
հարաբենն, որ գիտեալ երթայր նայամտս
՚ի մահ՝ ոչ զաչխար ընդ զենումն, և լնոյր
դարձել գիրն, խռովեցան հեթանոսք.

Թգ՛ւրք և զօրք ծառայեցան 'ի միասին վ՟ս տ՟ն և վ՟ս օծելոյ ն՟ր, 'ի վկայել հաւա-տին է՟ աւ՟տրնին՝ զփեսային իմացել ծա-գումն, 'ի մէջ գիշերին վառէր զկու-սանսն, եղանէր 'ի կառափիման վայրին ա-րեան ողջունի, և համբոյր սիրոյն՝ զոր սիրեաց, և 'ի նկատեալն սլացեալ վայր մաքրութե կուսոյ կերպին։

'Ի փեսային հայեցել ձ՟ւգյլթ՝ բաղձայր խանդաղակաթ սիրով 'ի նորայն միանալ լոյս, Տ՟ր | ասէ | ընկալ զհոգիս՝ որ սիրեց զքեզ, և զանձն իմ եդ վ՟ս քո․ արդա-րև սիրեցի զքեզ 'ի բոլոր սրտէ, և սի-րով քո յիս զքոյդ կենդանագրեցի ան-հպելի գեղեցկութի, 'ի վայելչութի սիրոյ վառել հուրք այրեցի զմեղս, և զօձին սպանի թոյնս, և կնքել զաղբիւր սիրոյ արբութե իմոյ կուսութես, զլուսոյդ քո արեն ըմպել շիթս՝ արեան իմոյ բաժա-կաւս․ արբ՛ո ինձ կենարար աջովդ՝ որ 'ի խաչին տարածել՝ զիս է՟ գրկեաց․ զի և ես ուրախութ քո լցեալ եղէց․

Նայոքիւք խանդաղատակն մաղթանօք կոյսն զփեսայն աղաչէր, և ամ՟անդեալ



զինքն՝

զինքն՝ խոնարհեցուցանէր զգլուխն 'ի
պատկն, քանզի ե՛հաս այնուհետեւ խո-
նարազգեաց վանիչն, ըստ իւր առեալ
զիշխանութիւն պարթեւզանցն եւ զօրս, հրա-
բորբոք ջահիւք՝ խամրացուցանել այ-
րել զանթառամ կուսութե վարդն, որ
լուսեղէն կանաչութեամբ հոգւոյն էր ծաղ-
կեալ. անգիտացեալ չարն, եթէ մոլո-
րութե իւրոյ բոց՝ այրմամբ նորա էր շի-
ջանելոց, եւ ցօղով արեամբ նորա՝ պար-
թեւք էին ծաղկելոց յանձգիտութե։ Ըստ
բնական իւր չարութեն մոլեգնեալ՝ ոչ
երբեմն զխաչողսն, ձեպէր 'ի տրունա-
կան մահն. զինուորացն ասէր կատակս,
զհանդերձից մերկանալն, զքղամիթն
կարմիր, զեղեգն, զփշոց պսակն, ո՛չ գի-
տելով՝ հակառակ ինքեան զայն հնա-
րէր. քանզի որն այնու զմեզ փրկեց,
զնա ընկձեալ կործանէր. վս զի՝ մեր-
կանալով զհանդերձսն՝ զմեղացն 'ի
մէնջ 'ի բաց առեալ զծածկոյթ, զնա
'ի բռնազգեցին փառացն կողոպտէր. եւ
զանօրէն արեանցն շաղախմանց զա-
նէծսն 'ի կարմիր եբարձ քղամիթն,

գործուն խորոյ մեզ զգեցուցանելով ծիրանիս։ Ո՛վ նա պարտաւորեալ անձանց մատնել սպանման, և զպարտաւորութեն յանցանացն դիր՝ եղեգամբն ջնջեաց, յորդեգրութի կենաց զմեզ գրելով․ զնա դատապարտեալ արտաքսել ՚ի տարտարոսաշէնն խաւար, և զանէծս փշոցն ՚ի պսակս պարաբանայր, երրորդութեն լուսով զմեզ պսակեալ․ Ընդովիւք որպէս փուշ տայր յայլութեան մշտնջենաւոր հրոյն՝ ըստ գրեցելութեան թէ՝ եղիցին մեղաւորք որպէս փուշ այրեցեալ․

Այսպէս և հակառակն նոցա՝ հնարեալ հարութ խորով․ քանզի հրապուրեալք ՚ի նմանէ իշխանք թագաւորին և զօրք, դառն և անողորմ տանջանս ՚ի վերայ որբոցն ածէին մանկանց, և այս լինէր մեզ առիթ կենաց, իսկ չարին՝ մահու։ քանզի կապեալ լինէր մարմինն մաքուր՝ միացեալ ՚ի բանն, և զմեզ լուծեալ ՚ի կապանաց բազմածութեն, չարին կապելով զիշխանութին։ Մերկանայր մարմինն լուսազգեաց տուագաստեալ սրբութ, և զմեզ զգեստաւորեալ մաքրութ աւազանին



լու-

լուսով, մերկացուցանելով զչարին կար-
ծեցեալ փառսն. այրեր տապակեր 'ի
հրաբորբոք կանթեղացն՝ մարմինն կեն-
դանախարուկէլ 'ի հուր ա̃ծունէն լու-
սոյ, և հրդեհեալ կիզոյր զմոլորութ̃
չարին, բորբոքելով 'ի մեզ զբոց հո-
գևոր հրոյն՝ զոր արկ յերկիր. հերձոյր
սրով կուսական որովայն մաքրազգեաց,
և զբանն կենաց 'ի հոգւոյն ա̃յ յղա-
ցեալ՝ հոգևոր երկամբք ծնեալ զմեզ
յորդեգրութի̃ հօրն լուսոյ, զօձին ջրն-
ջելով զբազմածնունդ չարութն. հա-
տանէր լեզուն՝ երկնաւոր աւետեաց
քարոզն, և լռեցուցանէր զկռապաշ-
տութե̃ հնչմունսն՝ յորդորելով զմեզ
'ի քաղցրութի̃ հոգևոր երգոց օրհնութեց.
փորեալ շիջանէր աչք ա̃յ վկային վա-
յելչացեալ լուսով, և շիջուցեալ խա-
ւարեցուցանէր զմոլորութե̃ կայծակն՝
ծագելով 'ի մեզ զճռ̃գյթս երրորդու-
թե̃ն. կոտորէր յօշէր բովանդակ կեն-
դանի մարմնոյն անդամք, և սպանանէր
զանդամս մեղաց, առնել զմեզ անդամս
արդարութե̃, ինքեամբ միացեալ 'ի գլուխն

## Ո՛ր Ս. Ձեւ զաձուածն Ս. Տ.

Այս է հանդէս մեր և անարատ հար-
սինն Քրիստոսի, որ սպան զմեղս, և արեամբն
իւրով ջրեալ զԹոյնս օձին, գնեաց 'ի
ծառայութենէ մեղաց յանդատապարտելի ա-
զատութեան յորդեգրութեան հօրն լուսոյ, և
որ ընդ նմին օրիորդ սրբութեան՝ նովին
հանդիսիւ արեամբ պսակեալ. կոխեալ
զմահ, և փշրեալ զգլուխ օձին, խաչազ-
գեաց մշտավառ լուսովն ելին զհետ
նորա յառագաստն լուսոյ երկնից ար-
քային. և լցաւ գիրն՝ որ ասէ, Թէ
տարցին Թագաւորի կուսանք զհետ նորա,
և զընկերս նորա տարցին նմա։

Իսկ մատնիչն գնաց ամաչեցեալ, հա-
կառակ մերոցն՝ հնարէր չարութեան, և տագ-
նապաւ փութայր 'ի հրաւիրեալն խա-
ւար, իսկ՝ որ 'ի լուսոյն հրաւիրեցաւ
հարսն Աստուածազգեաց, ընԹադրեալ զխո-
հերս չարին՝ շիջոյց զխայԹոց մահու,
և 'ի նկարագիր էական լուսոյն կենդա-
նակերպեալ, վերացաւ ընդ փայլական
հանդերձ լուսավառ զամբարաջահ պա-
րուք իմաստուն կուսանաց՝ Ճառա-



գայ-

գայթեալ ՚ի վերնում խորանին ։
Մինչ տեսանէր զերկիրն աւետեաց
զ՟ն կենդանեաց, զլեառն սրբութե՟ ,
զօթեւանսն լուսոյ, զբուրաստանն ծաղ
կեալ երկնաւոր տնկոյն, զժողովս անդ–
րանկացն, զպարս հրանիւթիցն, զհրա–
պարակս թագաւորելոցն ՚ի լոյս, պջոկս
անմահիցն, զբանակս սերովբէից․ եւ
հայեցեալ ՚ի նմ՟ ծարաւի սիրով՝ կնմ՟
հարցանէր․ զոր սիրեաց անձն իմ՝ տե–
սէք․ ուստի հիացեալ զօրք վերինք տե–
սանելով զհողն կենդանակերպեալ ՚ի
պատկեր արարչին, անցեալ ՚ի վր՟ իշ–
խանութեց, եւ խնդրէր մտանել ՚ի ներ–
քին կողմն վարագուրին առ անմեր–
ձենալի լոյսն ։
Զայն արկեալ գոչէին վերինքն առ
միմեանս․ ո՞վ է սա՝ որ ելանէ յանա–
պատէ սպիտակացեալ՝ յեցեալ գայ յեղ
բօր որդին իւր , զարդարեալ ՚ի գոյն
արեան , պսակ ունելով ՚ի կարմիր վար–
դից, ձայնէր ասելով․ համբուրեսցէ
զիս ՚ի համբուրից բերանոյ իւրոյ , եւ
կամ, սոքս ո՞վ են՝ որ զհետ սր՟ իբրեւ


զամպս

զամաս Թաւուցեալ, և իբրև զաղաւնիս
երամացեալ՝ գան առ մեզ․ և լսէին ՚ի
մէնէ՝ զի ասէր, ասքա յիս յուսացեալ
են, և ես տարայց զնոս ՚ի լեառն սըր-
բութե իմոյ, և ուրախ արարից ՚ի խա-
րանի փոց իմոց․ կոչէր և զչարսն, ե-
կեսցես և հանգիցես ՚ի խորան փոց
և ը հովանեաւ Թևոց իմոց՝ քոյր իմ
հարսն, զի բոլորովին գեղեցիկ ես, և
արատ ինչ ո՛չ գոյ ՚ի քեզ, դի՛ր զիս իբ-
րև զկնիք ՚ի վր սրտի քո, և իբրև զմա-
տանի ՚ի վր բազկի քո․ ձայնէր և առ օ-
րհորդսն, եկա՛յք առ իս վաստակեալք և
աշխատեալք կանայք, որ դիմեալ գայք
՚ի հանդիսէ, և ես ընկալայց զձեզ, և
եղիջիք ինձ դուք յուսատրս և՚ի դըր-
տերս, և ես եղեց ձեզ ամ, զի ուրա-
խութի իմ ՚ի ձեզ իցէ, և ձեր ուրա-
խութիւնն լցեալ եղիցի․

Նո՛յր ՚ի ձայնէ ցնծութեն փեսին սի-
ոն, զոր ՚ը թնոցն և կուսիցն ՚ի միասին ե-
րամացեալ պարս, զհրաւանեցն առ փեսայն
երգելին զերգս, ահա՛ դշխոյ ըազմէ
քումիկ ՚ի հանդերձս ոսկեհուռս զար-



դա-

դարձել է պաճուճեալ, և ցնծարան առէ, ամէն որք քո երկրպագեսցեն սմա, վն զի տե-սել զգեղեցկութի քո՝ սիրեաց զքեզ. և ծաղկեցիս դու պսակ վայելչութե ՚ի ձեռին տն, և թագ արքայութե ՚ի ձեռին այ քո. Բանայր այնու հետև առագաստն, մտա-նէր ՚ի սրբութի սրբոցն՝ առ բանին փեսայա-ցել, տարաւ զիս արքայ ՚ի սենեակ իւր, և հուր յանմերձենալեն եղէ լոյս, և ՚ի նորայն միաւորել ձու. գյթ. ասէր՝ ահա գտի, զոր սիրեաց անձն իմ, կալայ զնա և ո՛չ թողից, այլ ընդ հովանեաւ նր նս-տայց, և առ դարձ սր միացել ՚ի բարձանց, և զնորայն զգեցեալ զօրութի. կայսն ՚ի բարձանց նայեցել ՚ի ստորինս՝ նկատէր զհովլիտսն՝ ուր արեան իւրոյ խազայլն վտակք, զի քարացեալ կռապաշտութեց սառնամանիքն՝ անշարժ առ քաջ պտուղ-աբն ծնայլ, վն այսորիկ՝ իշխանութե Հոգւոյն հրամայէր ՚ի ձայն զօրութե, ա-րի՛ գնա՛ հիւսիս, և եկ հարաւ, շնչեա՛ ՚ի պարտէզ իմ և բուրեսցին խունկք իմ. Նա հրամայեալն գոյանայր առ ժամայն, քանզի ծագեաց ՚ի խոյուց արդարութե



արե-

արեգական՝ Լուսաւորիչն մր՝ զջերմ
ճռգյթ ա՛տրամներին լուսոյ փառաւորեալ բոր-
բոքեր ՚ի պաղս հիւսիսոյ, զամբարշտու-
թեն լուծանէր զձմեռն. հակառակա-
մարտն հողմովք հանդարտեցուցանէր,
և զմեղացն փրփրատեսակ ալեացն լեռ-
նացեալ կուտակս, և սառուցանողն օդ՝
որ զեռալն հոգւով արգելոյր, զոր մա-
հաթոյնն շնչէր վիշապ, անդր քան ըզ
հիւսսի գումրեր մեզով խաւարի ան-
գիտութե: Իսկ զհարաւ քաղցրուսոյց
բանին ծաւալեցուցել ՚ի տեղել զանձ-
րև Հոգւոյն սրբոյ, ծաղկեցուցանէր ըզ-
հայաստանս՝ ածգիտութե բողբոջիւք
վայելչացեալ քաղցր պտղովք. որպ զի՝
լինել արդարութե դրախտ խնգոյ՝ բու-
րել զանուշահոտութի հոգևոր երգոց
օրհնութե ՚ի փառս այ, և ընու կուսկն
մաղթանքն թէ՝ իջցէ եղբօր որդին իմ
՚ի պտրտէզ իւր, և կերիցէ զպտուղ ծա-
ռոց իւրոց, քանզի՝ հոգևոր հարսանեացն
կատարել խորհրդ, և փրկութե երկանցն
հասեալ ժամ, ծնանէր Հոգին սր ՚ի
յորդէս կուսին ՚ի միում վայրկենի զբա

զոր տրուէին Պարթևաց, և լցաւ գիրն,
երկնեաց Սիօն և ծնաւ ազգ մի ողջոյն,
որպէս յայտնի են բիւրուց՝ բանակքն ար-
քունի· որպէս ծնեալքն ՚ի հոգւոյն՝ զոր-
գեգրութեն յեփրատէս ՚ի միում ժամա-
տուին զաւետիս, շողացեալ ՚ի վերուստ
լուսոյն ծագմամբ։ Նաև բանաւորն
մոլեգնեալ, որ զկոյսն ինքեան աւթեալ
փափաքէր, ՚ի Քսէ աւթեցաւ· և զախ-
տիցն յինքեն շիջուցեալ զբոց, ճշմար-
տութեն վառեալ հուրբ գրեցաւ յորդիս
կուսին· և բանին եղեալ քարոզ՝ ընդոյր
աւետմնին լուսով ղշհայրենեցն տրուեն·
և ոչ միայն այս, այլև՝ զգանձս ածուեն
զծաղկս կուսին մարմնոյն՝ զոր սորոյն
էր արկեալ տապաստ, ժողովէր ամփո-
փէր գանձէր ինքեն մեծութի յաւիտե-
նական, և բարեաց օրինակ զինքն յար-
գարէր ամենուն, ամենեքեան հանդիսիւ
լուսաւորէր զարևելս՝ երրորդութեն
լուսով· Նաև յարևմուտս մոլորութեն
շիջանէր բոց՝ արեամբ վկայից, և աւե-
տարանին ճաշակ՝ լուսով շլջափայլեալ
յընդ հանուրս, քնքշ՝ այ ատելին սյն,



և

և ցանկաւէրն և գարշելին գեղեցկութեա_
նսն , որ վ̅ս̅ անարգանաց իւրոց՝ որ 'ի
Սրբոյն Հռիփսիմեայ , զչարին ոգորէր ը̅
տիեզերս՝ ճշմարտութեան լուեցուցանել
զկռոնս , յանկարծակի շիջեալ 'ի միջոյ
'ի բաց ընջեցաւ հանդերձ համախոհ օ_
ձին ծննդովք : և 'ի տանել նորին սբյ
կուսին ծագեալ եղջիւր փրկութ̅ե̅, թա_
գաւոր յուսացեալ 'ի տէր , սբ և յաղթող
կայսրն Կոստանդիանոս , և գործակից
մերոյ Արքային եղեալ Տրդատայ , ըղ_
բազմածութեան առ հասարակ ընջեցին
զկռոգովմունս՝ խաղաղութի արարեալ բո_
լոր տի , և զլոյս աւետրանին առաքելա_
բար յանձինս ընկալեալ՝ տիեզերս առատա
նուաճեցին զընդդ երկնաւս 'ի հնազան_
դութի թագաւորութե վերնոյն , և լցաւ գիրն՝
որ ասէ , խոստովանեսցին քեզ թագաւորք
երկրի , և թէ՝ թագաւորութիք երկրի
օրհնեսցէք զտէր : Աստանօր կոչի առ
բոլորս՝ բազմերանեան վայելչութ ա_
ւետիք սբյ կուսին Հռիփսիմեայ , որ̅
ամցն յայտնի է : Այսօր տօնիս այս
խորհուրդ՝ յորդորեաց զմեզ 'ի քաղց_



րա_

բաժայնութ̄ի հոգեւոր օրհնութ̄եց, այս է
կուսական վկայից հանդէս.

Սոքա են՛ որ մերոյ տ̄ր ո̄չ լուսաւորք փայլեալք՝ լցին ա̄ծութ̄ն հնչիւք զընդհանուրս, որք են գանձք ա̄ծութ̄ն ծածկեալ յերկրի մերում, աստեղք լուսաւորք ծագեալք յեկեղեցւոջ. Ճանապարհք մեզ և դուռն կենաց յերկինս, ողջակէզք բանաւորք, զենմունք կատարեալք, պատարագք ընդունելիք, ճշմարտութ̄ն քարոզք, աստութ̄ն տրձանացուցիչք, մոլորութ̄ն լուծումն, հարութ̄են հալածիչք, մեղաց ջնջեղեք տ̄ե մաքրութ̄ե, պարծանք ազգի մարդկան, յորս մեզ 'ի հանդերձեալն 'ի յ̄ս ք̄ս.

Սոցա նախանձաւորք լիցուք ա̄մէն՝ նմանողք սիրել զք̄ս. ո̄չ զի՛ ընկալցուք զողորմութ̄ի և գտցուք շնորհս 'ի դեպ ժամանակի օգնականութ̄ե սոցա.

Նշոքիկ յիմոց բանիցս քեզ պտուղ ե՛րջանիկդ 'ի կանոնս, նահատակ յաղթող և հզօրանդ, ո՛չ պսակ ձիթենեւոյ ողոմբիական մարտից յաղթանակ, և ո՛չ Թագ ոսկիակուռ ակամբք փայլեալ 'ի զարդ-

որթորմեան հարսանեաց. այլ մաքուր ըն-
տանեգոյն ընծայ սիրողաց բանին, և
ծաղիկ իմաստութե՛ ՚ի ք՛ս, որեւամբ առա-
գեալ բուրաստան, և համահաւաքեալ
՚ի զարդ քում հարմնութեդ, որպիսեօք
պսակիս ծաղկօք, ա՛ն ջինջ քրտունք իմոյ
նորաբոյս հոգւոյս, որ սիրէ զքեզ, սի-
րեցեալդ յիսկա՛պս բարւոյն. որև ըն-
կալցիս բարեգթութ՛բ՝ ո՛պ արդարև մայր
գորովագութ, և յիս դարձուսցես զգը-
թութի սիրողին զքեզ փեսայացեալ բա-
նին, զի եւս ցնծացայց ը՛ քեզ յերև ի լու-
սոյ փառաց ն՛ր. և զա՛մն զմեզ՝ զորս ա-
րեմբք ծնար յորդեգրութի բանին, մըշ-
տահայց աղօթիւք յանձն արասցես նմա՝
ծածկեալդ ը՛ հովանեաւ թևոց ն՛ր, ո՛պ
զի առաջնորդել լք լուսով աւ՛տրանին՝
ը՛ անգոյս անցանելով յաւ՛իտենից, ՚ի
հանդերձելան ժամանեսցուք հասանել
՚ի կե՛նս, ՚ի նոյն ինքն ՚ի Ք՛Ս Յ՛Ս ՚ի Տ՛Ր
մեր. ընդ որում Հ՛օր՝ միանգամայն և Հո-
գւոյն ս՛բյ՝ վայելէ փա՛ք իշխանութի և պա-
տիւ, Այժմ և միշտ և յաւ՛տնս. Ամէն։

Վ Ե Ր Ջ.

Յիշատակարան տպագրողի գրքոյս :

Շնորհիւ եւ ողորմութեամբ ամենասրբ
երրորդութեան Հօր եւ որդւոյ եւ
հոգւոյն սրբոյ, եւ բարեխօսութեամբ ամենսրբ
աստուածածնին, նորայս տպեցաւ սրբոց Հռիփ-
սիմեանց ներքոյեան ձայնս, (զորոյ սրբա-
գրել ընտիր օրինակն ունէաք առ մեզ
որ գրեալ էր 'ի թուականի մերում չկզ, 'ի
ժամանակս տեառնն կիլիկիոյ օշնի արքայի
եւ 'ի կաթուղիկոսութեան Տն կոստանդեայ,)
'ի փառս այ եւ 'ի վայելչութիւն ընթերցասէր
եղբարց ազգիս հայկազնոյ : Արդ՝
մինչ հանդիպիք սմա, եւ ընթերցմամբ
զմայլեալ հրճուիք, յիշեսջիք յարժա-
նաւոր աղօթս ձեր զտպօղ սորին զՍրբզն
Պտրրգի յետին ծառայ զՏր Անդրէաս ա-
ճակերսպօլսեցի, հոգւոր եւ մարմնաւոր
ծնողօք, խմովք կենդանեօք եւ ննջեցե-
լովք : Այլեւ՝ յիշեսջիք վաշխատաւոր
գործարանիս զԲրուտ Մարտուրեան պա-
լատցի գրաշար տրդս մանուկն, եւ զէք-
րէկցի յարութիւն եւ զլոյեցի գրիգորեան
մրահար յովսէփն . զի եւ դուք յիշեալ լի-
նիջիք 'ի փրկչէն մերմէ յսէ քսէ, որում
փառք յաւիտեանս, Ամէն : 47

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible] 033 [illegible]